ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ, ՀԱՄԿԽ-ՈՒՄ ԵՎ ՀԱՄԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը, ՀԱՄԿԽ-ն և ՀամԼԿԵՄ Կենտկոմը 1988 թ. դեկտեմբերի 5-ին ընդունեցին Ադրբեջանական ՍՍՀ-ի և Հայկական ՍՍՀ-ի երեխաներին օգնություն ցույց տալու միջոցառումների մասին որոշում, հետևյալ բովանդակությամբ:

Վերջին ժամանակներս կենտրոնական մարմիններն Ադրբեջանական ՍՍՀ-ի և Հայկական ՍՍՀ-ի պետական, կուսակցական ու հասարակական կազմակերպություններից, ինչպես նաև այդ հանրապետությունների աշխատավորներից խնդրանքներ են ստանում մշտական բնակության վայրերը հարկադրաբար լքած ընտանիքների երեխաների տեղավորման և ուսուցման գործում օգնություն ցույց տալու մասին:

Երկրի պետական և հասարակական կազմակերպությունները իրենց պարտքն են համարում անհետաձգելի օգնություն ցույց տալ Ադրբեջանի և Հայաստանի երեխաներին, նրանց պաշտպանել ազգամիջյան գժտությունից, հնարավորություն ընձեռել ծնողների խնդրանքով նրանց ժամանակավորապես տեղավորելու արհմիությունների և կոմերիտմիության առողջարաններում:

ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը, արհեստակցական միությունների համամիութենական կենտրոնական խորհուրդը և ՀամԼԿԵՄ Կենտրոնական կոմիտեն **որոշում են.**

1. Արհմիութենական առողջարաններում, տուրիստական հիմնարկներում և սանատորային տիպի պիոներական ճամբարներում մինչև 20 հազար տեղ հատկացնել ճախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաներին ժամանակավորապես տեղավորելու համար (անհրաժեշտության դեպքում՝ ծնողների հետ), ՀամԼԿԵՄ պիոներական ճամբարներում մինչև 4 հազար տեղ դպրոցականներին տեղավորելու համար: Այդ նպատակների համար ծախսերն իր վրա է վերցնում ՀԱՄԿԽ-ն և ՀամԼԿԵՄ Կենտկոմը:

2. Ընդունել Վ. Ի. Լենինի անվան սովետական մանկական ֆոնդի, ՍՍՀՄ կարմիր խաչի ու կարմիր մահիկի ընկերությունների միության առաջարկությունները՝ երեխաների օգնության հասարակական խմբեր ստեղծելու Ադրբեջանական ՍՍՀ-ի և Հայկական ՍՍՀ-ի մի շարք մարզերում ու շրջաններում:

3. ՍՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեին, Ադրբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ ժողովրդական կրթության մինիստրություններին՝ երեխաների ժամանակավոր տեղավորման վայրերում կազմակերպել ուսումնադաստիարակչական պրոցես: Այդ նպատակով կազմել և ուղարկել ուսուցիչների բրիգադներ, նրանց ապահովելով անհրաժեշտ քանակությամբ դասագրքերով և ուսումնական ձեռնարկներով:

4. Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի, ՍՍՀՄ հաղորդակցության ճանապարհների մինիստրությանը և ՍՍՀՄ քաղաքացիական ավիացիայի մինիստրությանը՝ ապահովել երեխաների կազմակերպված փոխադրումը նրանց ժամանակավոր տեղավորման վայրեր:

5. ՍՍՀՄ առողջապահության մինիստրությանը՝ ապահովել երեխաների անհրաժեշտ բուժսպասարկումը նրանց ժամանակավորապես գտնվելու վայրերում: Ընդունել ի գիտություն, որ այդ նպատակների համար լրացուցիչ ծախսերը ստանձնում է Վ. Ի. Լենինի անվան սովետական մանկական ֆոնդը:

В Совете Министров СССР, ВЦСПС и ЦК ВЛКСМ

Совет Министров СССР, ВЦСПС и ЦК ВЛКСМ приняли 5 декабря 1988 г. постановление о мерах помощи детям Азербайджанской ССР и Армянской ССР следующего содержания:

В последнее время в центральные органы поступают просьбы от государственных, партийных и общественных организаций Азербайджанской ССР и Армянской ССР, а также от трудящихся этих республик об оказании помощи в размещении и обучении детей из семей, вынужденных покинуть места постоянного проживания.

Государственные и общественные организации страны считают своим долгом оказать детям Азербайджана и Армении неотложную помощь, оградить их от межнациональной розни, предоставить возможность временного их размещения по просьбе родителей в здравницах профсоюзов и комсомола.

Совет Министров СССР, Всесоюзный Центральный Совет Профессиональных Союзов и Центральный Комитет ВЛКСМ **постановляют:**

1. Выделить в профсоюзных здравницах, туристских учреждениях и пионерских лагерях санаторного типа до 20 тыс. мест для временного размещения детей дошкольного и школьного возраста (при необходимости с родителями), в пионерских лагерях ВЛКСМ — до 4 тыс. мест для размещения школьников. Расходы на эти цели принимают на себя ВЦСПС и ЦК ВЛКСМ.

2. Принять предложения Советского детского фонда им. В. И. Ленина, Союза обществ Красного Креста и Красного Полумесяца СССР о создании в ряде областей и районов Азербайджанской ССР и Армянской ССР общественных групп помощи детям.

3. Государственному комитету СССР по народному образованию, министерствам народного образования Азербайджанской ССР и Армянской ССР организовать учебно-воспитательный процесс в местах временного размещения детей. Сформировать в этих целях и направить бригады учителей, обеспечив их необходимым количеством учебников и учебных пособий.

4. Совету Министров Азербайджанской ССР и Совету Министров Армянской ССР, Министерству путей сообщения СССР и Министерству гражданской авиации СССР обеспечить организованную перевозку детей к местам их временного размещения.

5. Министерству здравоохранения СССР обеспечить необходимое медицинское обслуживание детей в местах их временного пребывания. Принять к сведению, что дополнительные расходы на эти цели принимает на себя Советский детский фонд им. В. И. Ленина.